գնացեալ յերուսաղեմ՝ վախճանեցաւ անդ արքութեամբ. (Զամչ. Գ. էջ 185), Գանձասարի եկեղեցին ունի մի յիշատակարան, որուն Խորիշահի վերաբերեալ մասը նոյնութեամբ կը դնենք հոս. «... զոր ես նուաստ ծառայ Ս. Զալալ Դօլայ Հասան որդի Վախդանկայ՝ թոռն մեծի Հասանայ բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արձախական աշխարհի՝ թագաւոր և ի յոգնասահման նահանգի։ Զի հայրն իմ ի վախճան կենաց ելից իւր յաստեացս անդարձ կտակի հաստատեաց ինձ և մօր իմոյ Խորիշահի՝ որ էր դուստր մեծ իշխանաց իշխանին Սարգսի, զի շինեսցուք եկեղեցիս ի գերեզմանատուն հարց մերոց ի Գանձասար. զոր սկսեալ մեր ՈԿԵ (=1216) թուին օգնութեամբ բարերարին Աստուծոյ. և ի խիզել ղուսամտին արևելից՝ մայրն իմ կրօնաւորեալ յոգաւ յերուսաղեմ, երրորդ անգամ. եւ անդեն ի դրան Յարութեան խարազնազգեաց ճգնութեամբ, բազմաւանեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս ղուսոյ վկայութեամբ եւ անդեն պահեցաւ։»

Նոյն յիշատակարանէն կը հասկցուի նաև որ՝ Հասան Զալալի գերդաստանին համար մասնաւոր պատարագ մատուցանելու պատուէր կ'ըլլայ, Աստուածածնի Դ օրն իմ մօրն խորիշահին յիշատակագրութիւնով մը միասին։

1849ին Հասան Զալալեանց գերդաստանէն Աղուանից Պաղտասար մետրապոլիտն (Ծ. 1775 Յունվար 12. 1820ին եպս. 1830ին Մետրապոլիս. + 1854 Յունիս 27) 152 համար պաշտօնագրով մը Երուսաղէմի Կիրակոս պտրք.էն կը խնդրէ որ՝ եթէ Տիկին Խորիշահի մասին կը գտնուի ոեւէ տապանագիր կամ արձանագրութիւն օրինակը ղրկուի իրեն. Ս. Յակոբի վանքին մէջ Խորիշահի մասին ոեւէ յիշատակագրութիւն չգտնուելով՝ կարելի չէ եղած գոհացում տալ յիշեալ մետրապոլտին։ (Տե՛ս նաեւ Վարդան. էջ 184, Սիսն 1867 էջ 27-28)։ Ի յիշատակ Վախտանկի և Խորիշահի Թորոս գրչին ձեռքով ընդօրինակուած է մագաղաթեայ ձեռագիր մը (Էջ. Ցուց. Թ. 225 էջ 16)։

ԽՈՒԹԼՈՒՇ (ՄՀՏ.), ՏԻՊՐԻԿՑԻ (ՏԻՎՐԻԿ).— 1638ին Ս. Յակոբի վանքին կը յիշատակէ Աւետարան մը, (ՄՁ. Թ. 124), հետեւեալ յիշատակարանին համաձայն. «... Արդ գրեցաւ սա ի թվին Հայոց ՌՁԷ (=1638) ամին, ի քաղաքն Ստամբօլ, ձեռամբ մեղսաթաւալ գրչի ումեմն անարժանի...։ Զստացող սո-